ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 82

«26» 08 2020թ.

ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ի N 80 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Ավագի Գաբրիելյանին Շիրակի մարզի դատախազի պաշտոնից փոխադրելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության անփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնում նշանակելու և Շիրակի մարզի դատախազի պարտականությունների կատարումը նույն մարզի դատախազի տեղակալ Վահե Արշալույսի Միրզոյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար՝ 14.08.2020թ. N 258-Ա և 26.08.2020թ. N 269-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Կ.Գաբրիելյանի կողմից՝ Շիրակի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Վ.Միրզոյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Աֆանդյան Արմեն - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Հովսեփյան Կարեն - Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ

Մարտիրոսյան Հայկ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ
Խալաթյան Նաիրա -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Բաղդասարյան Լևոն -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Հովսեփյան Մարո -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ
Մուսիկյան Քնարիկ -	Շիրակի մարզի դատախազության տարածքային բաժնի ավագ մասնագետ:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի օգոստոսի 17-ի՝ «Հանձնում-ընդունում կատարելու մասին» N 80 հրամանը:

3. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի սեպտեմբերի 10-ը:

Ա.ԴԱՎԹՅԱՆ